ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔ ՓԱՐԻԶ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Նունե Պետրոսյան,

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ֆրանսիայի Հանրապետություն (քաղաք Փարիզ), 2024 թվականի մարտի 6-ից 9-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Ֆրանսիայի Հանրապետության կառավարություն, Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագիր և «Շենքերի և շինարարության համաշխարհային դաշինք» (GlobalABC) կազմակերպություն:

4. **Գործուղման նպատակը.**

2024 թվականի մարտի 7-ից 9-ը Ֆրանսիայի Հանրապետությունում (քաղաք Փարիզ) տեղի ունեցած «Շենքերի և կլիմայի համաշխարհային ֆորում» միջոցառմանը մասնակցելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

Կոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանը ներկա է եղել մի շարք քննարկումների, որոնց շրջանակում անդրադարձ է կատարվել պետությունների միջև շենքերի և շինությունների էներգաարդյունավետության ոլորտում համագործակցությանն առնչվող մի շարք հարցերի, մասնավորապես՝

- Աճխածնի արտանետումների դեմ պայքարի շրջանակում միջազգային համագործակցության կարևորությանը,
- միջազգային դերակատարների, կազմակերպությունների միջև համագործակցությանը՝ արագացնելու անցումը գրեթե զրոյական արտանետումների և դիմակայուն շենքերի,
- ոլորտում կայուն դիզայնի փորձի, տեխնոլոգիական նորարարությունների և լուծումների ուսումնասիրությանը,

- շենքերի և շինությունների էներգաարդյունավետության ու դիմակայունության բարձրացմանն ուղղված քաղաքականության մշակմանը և այլն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Ֆրանսիայի Հանրապետության բնակարանաշինության նախարար Գիյոմ Կասպարյանը կարևորել է միջոցառման մասնակից պետությունների կողմից «Շայլոտի հռչակագրի» ընդունումը, որը մեծ դեր ունի Փարիզի համաձայնագրի դրույթների իրականացման գործում, ընդգծել դիմակայուն շինարարության կարևորությունը, վերջինիս ազդեցությունը հասարակության և անհատի կյանքի տարբեր ոլորտների վրա, շինարարության ոլորտում կարողությունների մշտական զարգացման նշանակությունը:

Տեղի ունեցած պանելային քննարկումների ընթացքում մասնակից պետությունների, կազմակերպությունների ներկայացուցիչները նկարագրել են շինարարության և ճարտարապետության ոլորտներում իրենց փորձը, համագործակցության ընդլայնման նպատակով առկա ծրագրերն ու նախաձեռնությունները:

2024 թվականի մարտի 7-ին Նունե Պետրոսյանը մասնակցել է «From Local Roots to Global Impact: Exploring the Role of Local Governments in Effective Multilevel Governance to Decarbonize Buildings» (Արմատներից մինչև գլոբալ ազդեցություն. ուսումնասիրելով տեղական ինքնակառավարման մարմինների դերը արդյունավետ բազմամակարդակ կառավարման մեջ՝ շենքերի ածխաթթվացման նպատակով) խորագրով պանելային քննարկմանը, որի ընթացքում անդրադարձ է կատարվել մի շարք հարցերի, մասնավորապես՝

- Ի՞նչ ծրագրեր ու նախաձեռնություններ կարող են լրացնել շենքերի ածխաթթվացման ոլորտում տեղական ջանքերը,
- ինչպե՞ս կարող են տարբեր շահագրգիռ կողմեր արդյունավետ համագործակցել կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման նպատակով,
- ի՞նչ բազմակողմ նախաձեռնություններում է Կոմիտեն ներգրավվել՝ իր ծրագրերը ներկայացնելու և իրականացնելու համար:

Նունե Պետրոսյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարության, Կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքները: Նշվել է էներգաարդյունավետ շինարարության

դերը էներգետիկ անվտանգության բարձրացման, տնտեսական մրցունակության մեծացման, ինչպես նաև գլոբալ տաքացման բացասական հետևանքների մեղմացման գործում:

Անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների էներգաարդյունավետության ոլորտը կարգավորող օրենսդրությանը: Ընդգծվել է Հայաստանի Հանրապետությունում շենքերի էներգաարդյունավետության բարձրացման, վերականգնվող էներգիայի ֆինանսավորման, ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների կողմից արևային էներգիայի օգտագործման խթանման, օրենսդրական շրջանակի բարելավման, ինչպես նաև էներգաարդյունավետ շինարարության բնագավառում առկա խոչընդոտների կարգավորման անհրաժեշտությունը:

Ֆրանսիայի Հանրապետության էկոլոգիական անցման և տարածքային համախմբման նախարար Քրիստոֆ Բեչուի հրավերով 2024 թվականի մարտի 7-ին Նունե Պետրոսյանը մասնակցել է միջոցառման մասնակից տարբեր պետությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչների համար նախատեսված բարձր մակարդակի ընթրիքին:

2024 թվականի մարտի 8-ին Նունե Պետրոսյանը մասնակցել է «Doubling Down on Energy Efficiency: A high level dialogue on heating, cooling and passive design» (Էներգաարդյունավետության կրկնապատկում. բարձր մակարդակի երկխոսություն ջեռուցման, հովացման և պասիվ դիզայնի վերաբերյալ) խորագրով պանելային քննարկմանը, ներկայացրել Կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները, ոլորտում գոյություն ունեցող խնդիրները, առկա մարտահրավերների հաղթահարման նպատակով միջազգային համագործակցության կարևորությունը:

Անդրադարձ է կատարվել ջերմոցային գազերի արտանետումների, մինչև 2030 թվականը շենքերը գրեթե զրոյական արտանետումներով և դիմակայուն դարձնելու վերաբերյալ մի շարք հարցերի:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Միջոցառման շրջանակում 2024 թվականի մարտի 8-ին տեղի ունեցած նախարարական հանդիպմանը մասնակից պետությունների կողմից ընդունվել է համատեղ հռչակագիր, որի նպատակն է մինչև 2030 թվականը նպաստել զրոյական արտանետումներով դիմակայուն շենքերի

կառուցմանը և հիմնանորոգմանը՝ Փարիզյան համաձայնագրի նպատակներին հասնելու միտումով («Շայլոտի հռչակագիր»):

Մասնակից պետությունների ներկայացուցիչների կողմից ընդունվել է «Buildings Breakthrough» փաստաթուղթը, որը սահմանում է հինգ առաջնային ուղղություններ հետագա համագործակցության նպատակով (ստանդարտներ, պահանջարկի ձևավորում, ֆինանսներ և ներդրումներ, հետազոտությունների իրականացում, կարողությունների և հմտությունների զարգացում):

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այցի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել՝ շարունակել քննարկումները համագործակցության ընդլայնման, «Շայլոտի հռչակագրի» դրույթների, ինչպես նաև «Buildings Breakthrough» փաստաթղթի ուղենիշների իրագործման նպատակով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

13.03.2024 թվական